ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ամսոյս 13 ին Նապուլուսէն քաղաքս ժամանեց Պրազիլիոյ Վեհափառ Կայսրն և Կայսրուհին ։ Ընդունելութեան պաշտօնական հանդէսներ չեղան ․ որովհետև Կայսրը իւր ուղևորութիւնը ծպտեալ կըկատարէ ․ դիմաւորութեան միայն քաղաքիս Վսեմ. Կառավարիչը գնացած էր ոչ պաշտօնապէս ․ բայց Դամասկոս կոչուած դրան առջև մեծ բազմութիւն հաւաքուած էր տեսնելու համար Վեհափառ հիւրերը ։ Յիշեալ դռնէն Կայսրը իւր ուղեկիցներով քաղաքը մտաւ և ուղղակի Ս. Յարութեան տաճարը գնաց յուխտ և երկրպագութիւն և անտի մեկնեցաւ քաղաքիս հիւսիսային կողմը պատրաստուած վրաններուն տակ օթևանելու , որ յատկապէս պատրաստուած էին ։ Երկրորդ օրը Յորդանան և Երիքով գնաց և անտի վերադարձաւ քաղաքս , ուր ամեն գլխաւոր տեղերը , ինչպէս և մեր Ս. Յակոբեանց , Հրեշտակապետաց և Ս. Փրկչայ վանքերը , նոյնպէս ժառանգաւորաց վարժարանին մէջ եղած հնութեանց թանգարանը այցելեց ․ և ամսոյս 23ին մեկնեցաւ ՚ի Յոպպէ ։

— 13ին դարձեալ ՚ի Բեթլեհէմ ննջեցեալ մի ունեցանք , որ իւր նախորդաց նմանցաւ ՚ի նախատանաց ենթարկեցաւ Յունաց մոլեռանդութեան և հակառակութեան շնորհիւ ։ Ննջեցեալը տունէն կը բերեն եկեղեցական զգեստներով , խաչով և մոմերով և սինոդարդ գաւթէն անցնելով առանց ընդդիմութեան կը տանին մեր սեպհական եկեղեցին , ուր հարկ եղած արարողութիւններն կատարելէն զկնի գերեզմանատունը տանելու ատեն կ՚անցնին վերստին սինոդարդ գաւթէն ․ բայց երբ փողոցի երկաթեայ դուռը կը հասնին , դեռևս հազիւ յուղարկաւորաց կէսը դուրս ելած , ընդ որս և եկեղեցականք , զօրքերը դուռը կը գոցեն և չեն թողուր , որ ննջեցեալը դուրս հանեն ։ Մեր Տեսուչը շուրջառը թողլով՝ կ՚երթայ Միւտիրին բողոքելու այս խայտառակութեան դէմ ․ Միւտիրը կը պատասխանէ , որ Մոնակոսները մեծ տղաքներ են ընդդէմ ամլութեան , պէտք է փոքր լինին ։ Այս դրութեան մէջ մէկ ժամու չափ կը մնայ ննջեցեալը ․ վերջապէս մերոյինք կըստիպուին երկու փոքրիկ տղաքներու շապիկ հագցնել մոմ բռնել տալու համար ․ որպէս զի դուռը բացուի և ննջեցեալը դուրս հանուի ։ Ս. Պատրիարքը բողոքեց այս եղելութեան դէմ Կառավարչին ․ և նա պատասխանեց , որ դուք իրաւունք չունիք եղեր խաչկրին և մոմակալներուն շապիկ հագցնելու ․ այս պատճառաւ Միւտիրը արգիլած է ։ Զարմանալի ժամանակ ․ Կառավարութիւնը , կրօնքով և ազգով տարբեր , մինչև մեր եկեղեցական արարողութեանց կը միջամտէ , չեմք գիտեր թէ Տէրութեան որ քաղաքին մէջ տեսնուած է , որ հայ ննջեցեալին առջևէն խաչ տանողը և մոմակալները առանց եկեղեցական զգեստի լինին ։

— Տեղւոյս Յունաց Միաբանութեան մի քանի տարիէ ՚ի վեր ունեցած երկպառակեալ վիճակը ընթերցող ազգայնոց յայտնի է ․ նախ՝ իրենց Կիրիլոս Պատրիարքը ձգեցին , ուրիշ մը դրին , զայն ևս ձգեցին , երրորդ մի ընտրեցին ․ բայց այժմ բոլոր Միաբանութիւնը Կիրիլոսի դէմ ըրածնուն վերայ զղջացած է ․ ուստի որոշեցին յանուն Միաբանութեան յատուկ պատգամաւորութիւն խրկել՝ Կիրիլոսին սիրտն առնելու և միանգամայն յԵրուսաղէմ հրաւիրելու ոչ իբր Պատրիարք , այլ իբր Միաբանական անդամ ։ Եթէ նա չընդունի Միաբանութեան հրաւէրը , պիտի խնդրեն , որ գոնէ հաճի ՚ի Պօլիս Երուսաղէմայ փոխանորդարանը նստիլ ։ Միաբանական պատգամաւորութիւնը , որ երեք հոգիէ կը բաղկանայ , ամսոյս 20 ին ճանապարհ ելաւ ՚ի Պօլիս ։

digitised by A.R.A.R.@